

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ջառախեցի. «ԿՐԸԳԸ» (Ըրտառապած «Մշակից»): 16 եր., գ. 3 կող. Թիֆլիս,
1903 թ.

Մեր՝ մեծ մասամբ կերպարանազուրկ՝ զրոգներին մէջ պ. Ջառախեցին աչքի է ընկնում իր խիստ որոշ անհատականութեամբ:

Նա փոքր բաժակով է ջուր խմում, բայց իր բաժակովն է խմում և խմում է ժողովրդական կեանքի աղբիւրից:

Նրա սիրած բնաբանը՝ գիւղացու ցաւերն են: Իր փոքրիկ արձակ բանաստեղծութիւնների մէջ, որոնց կիսաժողովրդական ոճը պատկերաւոր է և համով-հոտով, նա այդ ցաւերն է միշտ երգում: Եւ նրա մուսան աւելի վրէժի մուսա է, քան տիրութեան:

«Կրակը»—վրէժի մուսայի ներշնչումն է:

Գալօն՝ աղբատ, անճար գիւղացի է: Նրա «ութն անդամ գերգաստանը մի զոյգ եզան պոչին է նայում»: Այդ եզներով նա ոչ միայն պէտք է հոգար իր ամբողջ ընտանիքի ապրուստը, այլ և պէտք է վճարէր հօրից մնացած երկու հարիւր մանէթ պարտքը իր վիթխարի տոկոսներով:

Տասնևմեց տարուան սև պատմագրութիւն ունէր այդ պարտքը: Գալօն պսակելու ժամանակ նրա հայրը յիսուն բուրլի էր վերցրել պարտք Մարտիրոս աղայից, ու թէն տարէցտարի ինքն էլ, հայրն էլ տալիս էին տոկոսը, բայց դարձեալ գիւղի գրագրի «հաշուով» դարձել էր երկուհարիւր մանէթ:

Եւ ահա Գալօն ոչ սերմացու ունի, ոչ սերմացու գնելու փող, ոչ էլ նոյն իսկ «մի եփելու ալիւր»:

Մարտիրոս աղան «օգնութեան» ձեռք է մեկնում նրան:

Ուտելիք տալիս է, պարտքի դրամագլխիցն էլ մի բան պակսեցրնում է այն պայմանով, որ Գալօն իր արտերը նրան տալ և ինքն էլ փողի շահի տեղը նրան «մարաբա» (ամբողջ ընտանիքով ծառայ) դառնայ:

Գալօն ազատ մարդ է, բայց որովհետև աղքատ է ու անձար, ստիպւում է Մարտիրոս աղայի ճորտը դառնալ:

Ամենակարող փողն ստրկացնում է ազատ մարդուն: Բայց տնտեսապէս ստրուկ դառնալով՝ Գալօն բարոյապէս չի ստրկանում: Նա չի կարողանում հաշտուել այդ անարդարութեան հետ: Նրա ամբողջ էութիւնը բողբոլում է հասարակական անարդար կարգերի դէմ: Եւ այդ բողբոլը հասնում է ծայրայեղ սաստկութեան, երբ նոյն իսկ երկինքը կարծես կողմնապահութիւն է անում: Կարկուտը փչացնում է գիւղի արտերի մեծ մասը, բայց Գալօի արտերին մնաց չի տալիս:

«Անտէր կարկուտ, ցուրտ ու եղեամ, ցաւ ու փորձանք կարծես աղքատ, խեղճ անձարի, թոյլ անդօրի համար են միշտ... և Աստուած էլ միշտ հարուստի, ուժովի կողմն է պահում: Քանի Գալօն դէսից-դէնից «փոխ» վերցրած, պարտքով դնած սերմով ցանում էր արտերն իր համար, կամ կարկուտն էր գալիս խփում, կամ երաշան այրում, խանձում, կամ հեղեղը սրբում տանում, եղեամբ սառեցնում, մուկը կտրում, ճիճուն ուտում... իսկ այդ տարին, որ «դանալը ոսկրին հասած», ճարը կտրած՝ Մարտիրոս աղին «մարաբա» էր եղել ու այդ տարին նրա համար հերկել, ցանել, նրա արտերին ոչ մուկ-միւկ, եղեամ, կարկուտ, երաշտ կամ ցուրտ, ոչ էլ ճիճու մօտեցաւ. կարծես դրանք էլ մարդկանց նման վախում, դողում էին հարուստ մարդից՝ Մարտիրոս աղից... Եւ խեղճ Գալօն սրտի ցաւով, մրմուռով քսան սալլ դարի, բրնձի պէս հատ-հատ ջոկած մաքուր դարի քաղեց, ժողվեց իր «քիւլֆաթի», տղերանց հետ, իր եզներով կրեց, բերեց ու հին պարտքի տոկոսի տեղ գիգեց աղա Մարտիրոսի մեծ կալը, որ յետոյ էլ կասէ, լցնէ նոյն աղայի ամբարը: Եւ այս բոլոր արիւն-քրտինք վաստակի վարձ Գալօն պիտի ստանար լոկ մի կտոր հաց, չոր ու ցամաք դարու հաց: Այսպէս է մեր գիւղերում «մարաբայի» ու ու աղայի «օրէնքը», երբ «մարաբան» մուրհակով պարտք ունի հարուստ աղային...»

Մարտիրոս աղան ուտելիքը շատ խնայողութեամբ է տալիս Գալօի ընտանիքին: «Հացը թանգ է, քիչըմ հատարով (խընայելով) ապրեցէք», ասում է Գալօի կնոջը:

Գիշեր է: Գալօի երեխաները չեն կարողանում քնել դատարկ փորով: Կինը Գալօին ուղարկում է հարեանների մօտ

հաց փոխ առնելու Գալօն բերում է մի քանի հատ գարու սև հաց։ Բայց շատ ուշ է վերագառնում։ Շուտով «հաւար» է ընկնում գիւղը։ Մարտիրոս աղայի կալում «քսան սայլնոց բրնձի պէս գարու ղէզը, որ այդ օրը միայն կրել, դիզել էին խեղճ Գալօի արտերից, դժուրի պէս վառում էր»...

Գալօն էր հրդեհել, և այժմ էլ հանգցնելու պատրուակով աւելի թէժացնում ու բորբոքում էր կրակը։

«Կրակը սրբեց, լափեց, տարաւ, մոխրակոյտի վերածեց Մարտիրոս աղայի ամբողջ կալն ու խոտերի էլ կէսն այրել, պըրծել էր, երբ հաղիւհազ կարողացան ամբողջ գիւղով մի կերպ մարել, հանգչնել։ Կէս գիշերը անց էր արդէն, երբ ամբոխը տուն ցրուեց։ Գալօն էլ ուշ տուն գնաց ու կեանքի մէջ գէթ մի գիշեր, թէպէտ քաղցած, բայց հովացած հանգիստ սրտով քուն մտաւ։ Կրակը մարեց... և իր հետը քանի-քանի Գալօի պէս վառուած, դազուած բոց սրտերի կրակ մարեց...»

Վրէժխնդրութեան ձեռք, ինչպէս տեսնում էք, ասպետական չէ։ Բայց տարօրինակ չէ՞ սարկայնել, անասնացնել մարդուն և յետոյ նրանից պահանջել, որ իր վրէժն արտայայտի ասպետական ձևով։ Անիշխանական հոգեբանութիւնը ծայրայեղ ստրկութեան ծնունդն է և նրա հոգեվարքի շղաճգութիւնը։

Տ. Յ.

Յարութիւն եսայեան. «ԼՕԽՄԱՆԻ ՀԷՔԻՄԸ». պատկեր. հրատարակեց Տիգրան Նուրալեան. 32 էր. գ. 8 կ. Թիֆլիս, 1903 թ.

Դուք չառ անգամ կարդացած կը լինէք լրագիրներում թղթակցութիւններ խաբերայ «հէքիմների» մասին, որոնք չա հագործում են ժողովրդի դիւրահաւատութիւնը և նախապաշարմունքները։ Դուք կարդացած կը լինէք անշուշտ այնպիսի «հէքիմների» մասին, որոնք բժշկում են գեղջկուհիներին չբերութիւնից, և հազդին փողեր են կորզում այդ միամիտ արարածներից ու իրանց կրքերին յագուրդ տալիս նրանցից գեղեցիկների հետ։

Այդպիսի մի հէքիմ է պ. Շսայեանի Վօխմանի հէքիմը։

Եթէ պ. Շսայեանը գեղարուեստագէտ լինէր, նա կը տար մեզ այդպիսի հէքիմի մի ուէլիէֆ տիպ, կը ծանօթացնէր մեզ նրա հոգեբանութեան հետ։ Բայց նա գեղարուեստագէտ չէ, ուստի և բաւականանում է արձանագրելով այն, ինչ որ կարող էր նկատել և պատմել ամեն մի հասարակ գեղջկուհի։

Մի բան միայն չէր կարող պատմել այդ գեղջկուհին, գոնէ